**Լեռնային Ղարաբաղի Հանրապետության
անշարժ գույքի շուկան 2008թ. III եռամսյակում**

*Հոդվածը ներկայացնում է ԼՂՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից իրականացված, անշարժ գույքի շուկայի մոնիտորինգի /համակարգված դիտարկումներ/ աշխատանքների արդյունքները և նպատակ ունի քաղաքացիներին իրազեկ դարձնելու ԼՂՀ անշարժ գույքի շուկայի իրավիճակը: Հոդվածում ներկայացվող Ստեփանակերտ քաղաքում և հանրապետության շրջաններում անշարժ գույքի շուկայական գները ձևավորվել են կոմիտեի ստորաբաժանումների կողմից գրանցված առուվաճառքների գործարքների պայմանագրային գների, մեր կողմից կատարված հարցումների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող անշարժ գույքի գների վերլուծության արդյունքում:*

2008թ. III եռամսյակում կոմիտեի ստորաբաժանումների կողմից իրականացվել են 2078 իրավունքների պետական գրանցումներ, որոնց քանակը 2008թ. II եռամսյակի համեմատ աճել է՝ 1,7%-ով, իսկ 2007թ. III եռամսյակի համեմատ՝ 6,5%-ով:

Ըստ Ստեփանակերտ քաղաքի և հանրապետության շրջանների, իրականացված գրանցումների ծավալները ունենն հետևյալ բաշխվածությունը.



2007-2008թթ. III եռամսյակներում և 2008թ. II եռամսյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված իրավունքների պետական գրանցումների քանակական փոփոխություններն ըստ Ստեփանակերտ քաղաքի և հանրապետության շրջանների, ունեն հետևյալ բաշխվածությունը.

| | *III եռամսյակ 2007թ.* | *փոփոխումը* | *III եռամսյակ 2008թ.* | *փոփոխումը* | *II եռամսյակ 2008թ* |
|---|---|---|---|---|---|
| Ստեփանակերտ | *1088* | *-13,1%* | *945* | *2,1%* | *926* |
| Ասկերան | *211* | *7,1%* | *226* | *8,1%* | *209* |
| Մարտունի | *161* | *38,5%* | *223* | *-19,5%* | *277* |
| Մարտակերտ | *104* | *85,6%* | *193* | *-25,5%* | *259* |
| Հադրութ | *48* | *79,2%* | *86* | *7,5%* | *80* |
| Շուշի | *249* | *-0,8%* | *247* | *94,5%* | *127* |
| Քաշաթաղ | *90* | *75,6%* | *158* | *-4,2%* | *165* |
| ***Հանրապետություն*** | ***1951*** | ***6,5%*** | ***2078*** | ***1,7%*** | ***2043*** |

Նույն ժամանակահատվածում անշարժ գույքի նկատմամբ իրականացված իրավունքների գրանցումները, ըստ տեսակների, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2007-2008թթ. III եռամսյակներում և 2008թ. II եռամսյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակական փոփոխումներն ըստ գործարքների, ունեն հետևյալ բաշխվածությունը.

| *Գործարքների տեսակները* | *III եռամսյակ 2007թ.* | *փոփոխումը* | *III եռամսյակ 2008թ.* | *փոփոխումը* | *II եռամսյակ 2008թ.* |
|---|---|---|---|---|---|
| *Առուվաճառք* | *405* | *-12,8%* | *353* | *25,2%* | *282* |
| *Նվիրատվություն* | *150* | *-40,0%* | *90* | *0,0%* | *90* |
| *Վարձակալում* | *114* | *2,2 անգամ* | *251* | *-43,2%* | *442* |
| *Գրավադրում* | *293* | *31,4%* | *385* | *12,9%* | *341* |
| *Ժառանգություն* | *137* | *0,7%* | *138* | *0,7%* | *137* |
| *Օգտագործում* | *3* | *8,0 անգամ* | *24* | *4,8 անգամ* | *5* |
| *Սեփականաշնորհում* | *228* | *-4,4%* | *218* | *-5,2%* | *230* |
| *Մասնավորեցում* | *71* | *5,6%* | *75* | *56,3%* | *48* |
| *Առաջնային գրանցում* | *550* | *-1,1%* | *544* | *16,2%* | *468* |
| *Ընդամենը գործարք* | ***1951*** | ***6,5%*** | ***2078*** | ***1,7%*** | ***2043*** |

2008թ. III եռամսյակում հանրապետությունում ընդհանուր առմամբ իրականացվել են 353 առուվաճառքի գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումներ, որոնց քանակը նախորդ եռամսյակի համեմատ աճել է՝ 25,2%-ով, իսկ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նվազել է՝ 12,8%-ով, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ իրականացվել են 94, իսկ բնակելի տների նկատմամաբ՝ 72 առուվաճառքի գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումներ:

2007-2008թթ. III եռամսյակներում և 2008թ. II եռամսյակում Ստեփանակերտ քաղաքում և հանրապետության շրջաններում առուվաճառքի գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակների փոփոխությունններն ունեն հետևյալ բաշխվածությունը.

| | *III եռամսյակ 2007թ.* | *փոփոխումը* | *III եռամսյակ 2008թ.* | *փոփոխումը* | *II եռամսյակ 2008թ.* |
|---|---|---|---|---|---|
| Ստեփանակերտ | *186* | *-8,6%* | *170* | *37,1%* | *124* |
| Ասկերան | *75* | *-46,7%* | *40* | *29,0%* | *31* |
| Մարտունի | *39* | *5,1%* | *41* | *-12,8%* | *47* |
| Մարտակերտ | *23* | *17,4%* | *27* | *-18,2%* | *33* |
| Հադրութ | *4* | *3,0 անգամ* | *12* | *20,0%* | *10* |
| Շուշի | *69* | *-18,8%* | *56* | *64,7%* | *34* |
| Քաշաթաղ | *9* | *-22,2%* | *7* | *2,3 անգամ* | *3* |
| ***Հանրապետություն*** | ***405*** | ***-12,8%*** | ***353*** | ***25,2%*** | ***282*** |

2007-2008թթ. III եռամսյակներում և 2008թ. II եռամսյակում անշարժ գույքի առուվաճառքի գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակները և նրանց փոփոխումներն ըստ անշարժ գույքի առանձին տեսակների ունեն հետևյալ բաշխվածությունը.

| N | Անշարժ գույքի տեսակները | Առուվաճառքի գործարքների քանակները | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | III եռամսյակ 2007թ. | փոփոխումը | III եռամսյակ 2008թ. | փոփոխումը | II եռամսյակ 2008թ. |
| 1 | բազմաբնակարան շենքի բնակարան | 98 | -4,1% | 94 | 32,4% | 71 |
| 2 | առանձնատուն | 69 | 4,3% | 72 | 63,6% | 44 |
| 3 | արտադրական նշ. օբյեկտ | 20 | -55,0% | 9 | -30,8% | 13 |
| 4 | հասարակական նշ. օբյեկտ | 59 | -23,7% | 45 | 80,0% | 25 |
| 5 | ավտոտնակ | 10 | 30,0% | 13 | 3,25 անգամ | 4 |
| 6 | հող | 149 | -19,5% | 120 | -4,0% | 125 |
| | Ընդամենն անշարժ գույք | **405** | **-12,8%** | **353** | **25,2%** | **282** |

2008թ. II և III եռամսյակներում հանրապետության մի շարք քաղաքային համայնքներում վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների և բնակելի տների առուվաճառքների գործարքների պայմանագրային գների և կոմիտեի կողմից իրականացված անշարժ գույքի շուկայի դիտարկումների արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական նվազագույն, առավելագույն և միջին գները ու նրանց փոփոխումները :

***Բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների***

| Քաղաքներ | 2008թ. II եռամսյակ | | | 2008թ. III եռամսյակ | | | փոփոխումը 2008թ. II եռամսյակի նկատմամբ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | 1 քմ արժեքը /$/ | | | 1 քմ արժեքը /$/ | | | |
| | նվազագույն | առավելագույն | միջին | նվազագույն | առավելագույն | միջին | |
| Ստեփանակերտ | 790,0 | 860,0 | **825,0** | 850,0 | 900,0 | **875,0** | ***6,1%*** |
| Ասկերան | 160,0 | 210,0 | **185,0** | 170,0 | 220,0 | **195,0** | ***5,4%*** |
| Մարտունի | 157,0 | 205,0 | **181,0** | 165,0 | 210,0 | **187,5** | ***3,6%*** |
| Մարտակերտ | 80,0 | 95,0 | **87,5** | 80,0 | 100,0 | **90,0** | ***2,9%*** |
| Հադրութ | 96,0 | 108,0 | **102,0** | 100,0 | 110,0 | **105,0** | ***2,9%*** |
| Շուշի | 130,0 | 280,0 | **205,0** | 150,0 | 290,0 | **220,0** | ***7,3%*** |

***Բնակելի տներ***

| Քաղաքներ | 2008թ. II եռամսյակ | | | 2008թ. III եռամսյակ | | | փոփոխումը 2008թ. II եռամսյակի նկատմամբ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | միջինը 200 քմ շինությամբ և միջինը 1000քմ տնամերձով բնակելի տան արժեքը /$/ | | | միջինը 200 քմ շինությամբ և միջինը 1000քմ տնամերձով բնակելի տան արժեքը /$/ | | | |
| | նվազագույն | առավելագույն | միջին | նվազագույն | առավելագույն | միջին | |
| Ստեփանակերտ | 76300,0 | 126500,0 | **101400,0** | 86500 | 130200 | **108350,0** | *6,8%* |
| Ասկերան | 13200,0 | 18800,0 | **16000,0** | 14500 | 19300 | **16900,0** | *5,6%* |
| Մարտունի | 10900,0 | 16800,0 | **13850,0** | 12000 | 17200 | **14600,0** | *5,4%* |
| Մարտակերտ | 7300,0 | 10200,0 | **8750,0** | 7500 | 10900 | **9200,0** | *5,1%* |
| Հադրութ | 7800,0 | 10500,0 | **9150,0** | 8100 | 11000 | **9550,0** | *4,4%* |
| Շուշի | 9800,0 | 16900,0 | **13350,0** | 10200 | 18500 | **14350,0** | *7,5%* |

Անշարժ գույքի շուկայի վերլուծությունը հիմք է հանդիսանում պնդելու, որ վերջին երկու եռամսյակների ընթացքում անշարժ գույքի գների դինամիկան աճման միտում ունի :

2008թ-ի III եռամսյակում հանրապետությունում իրականացվել են 251 վարձակալության գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումներ, որոնց քանակը նախորդ եռամսյակի համեմատ նվազել է՝ 43,2%-ով, իսկ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճել է՝ 2,2 անգամ:

Վարձակալության գործարքների քանակների փոփոխումներն ըստ Ստեփանակերտ քաղաքի և հանրապետության շրջանների 2007-2008թթ. III եռամսյակներում և 2008թ. II եռամսյակում ունեն հետևյալ բաշխվածությունը.

| | III եռամսյակ 2007թ. | փոփոխումը | III եռամսյակ 2008թ. | փոփոխումը | II եռամսյակ 2008թ. |
|---|---|---|---|---|---|
| Ստեփանակերտ | *19* | *2,9 անգամ* | *55* | *57,1%* | *35* |
| Ասկերան | *39* | *33,3%* | *52* | *-10,3%* | *58* |
| Մարտունի | *20* | *3,1 անգամ* | *61* | *-46,5%* | *114* |
| Մարտակերտ | *9* | *7,4 անգամ* | *67* | *-58,9%* | *163* |
| Հադրութ | *9* | *9-ով պակաս* | *0* | *6-ով պակաս* | *6* |
| Շուշի | *1* | *5,0 անգամ* | *5* | *-16,7%* | *6* |
| Քաշաթաղ | *17* | *-35,3%* | *11* | *-81,7%* | *60* |
| ***Հանրապետություն*** | ***114*** | ***2,2 անգամ*** | ***251*** | ***-43,2%*** | ***442*** |

2008թ-ի III եռամսյակում հանրապետությունում գրանցվել են, 928,88 հա ընդհանուր մակերեսով, գյուղատնտեսական նշանակության հողերի վարձակալության 145 գործարքներ, որոնց քանակները և մակերեսները ըստ հանրապետության շրջանների ունեն հետևյալ բաշխվածությունը.

| | *2008թ-ի III եռամսյակում վարձակալված հողերի* | |
|---|---|---|
| | ***քանակը*** | ***մակերեսը /հա/*** |
| *Ասկերան* | 41 | 258,04 |
| *Մարտունի* | 52 | 161,03 |
| *Մարտակերտ* | 20 | 251,3 |
| *Հադրութ* | 0 | 0,0 |
| *Շուշի* | 3 | 3,89 |
| *Շահումյան* | 1 | 1,0 |
| *Քաշաթաղ* | 28 | 253,62 |
| ***Հանրապետություն*** | ***145*** | ***928,88*** |

Հանրապետությունում անշարժ գույքի շուկայի դիտարկումները ցույց են տալիս, որ հանրապետության քաղաքներում վարձակալության համար, որպես ակտիվ անշարժ գույքի տեսակներ, հանդես են գալիս Ստեփանակերտում ` հասարակական նշանակության օբյեկտները, իսկ շրջաններում՝ գյուղատնտեսական նշանակության հողերը:

2008թ-ի III եռամսյակում հանրապետությունում իրականացվել են 385 գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումներ, որոնց քանակը նախորդ եռամսյակի համեմատ աճել է` 12,9%-ով, իսկ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ` 31,4%-ով:

2007-2008թթ. III եռամսյակներում և 2008թ. II եռամսյակում հանրապետության շրջաններում անշարժ գույքի գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակները և նրանց փոփոխումներն ըստ անշարժ գույքի առանձին տեսակների ունեն հետևյալ բաշխվածությունը.

| | *Անշարժ գույքի տեսակները* | *Գրավադրված անշարժ գույքի քանակ* | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | *III եռամսյակ 2007թ.* | *փոփոխումը* | *III եռամսյակ 2008թ.* | *փոփոխումը* | *II եռամսյակ 2008թ.* |
| *1* | *բ/բ շենքի բնակարան* | *113* | *59,3%* | *180* | *34,3%* | *134* |
| *2* | *առանձնատուն* | *61* | *83,6%* | *112* | *24,4%* | *90* |
| *3* | *արտադրական նշ. օբ.* | *19* | *-26,3%* | *14* | *-48,1%* | *27* |
| *4* | *հասարակական նշ. օբ.* | *81* | *-18,5%* | *66* | *-12,0%* | *75* |
| *5* | *ավտոտնակ* | *1* | *0,0%* | *1* | *-83,3%* | *6* |
| *6* | հող | *18* | *-33,3%* | *12* | *33,3%* | *9* |
| | *Ընդամենը* | ***293*** | ***31,4%*** | ***385*** | ***12,9%*** | ***341*** |

2007-2008թթ. III եռամսյակում և 2008թ. II եռամսյակում գրավադրման գործարքների քանակների փոփոխություններն ըստ Ստեփանակերտ քաղաքի և հանրապետության շրջանների ունեն հետևյալ բաշխվածությունը.

| | III եռամսյակ 2007թ. | փոփոխումը | III եռամսյակ 2008թ. | փոփոխումը | II եռամսյակ 2008թ. |
|---|---|---|---|---|---|
| Ստեփանակերտ | 219 | 10,5% | 242 | 3,0% | 235 |
| Ասկերան | 21 | 71,4% | 36 | -12,2% | 41 |
| Մարտունի | 28 | 92,9% | 54 | 68,8% | 32 |
| Մարտակերտ | 9 | 0,0% | 9 | 28,6% | 7 |
| Հադրութ | 5 | 2,8 անգամ | 14 | 2,0 անգամ | 7 |
| Շուշի | 9 | 2,5 անգամ | 23 | 27,8% | 18 |
| Քաշաթաղ | 2 | 3,5 անգամ | 7 | 7,0 անգամ | 1 |
| **Հանրապետություն** | **293** | **31,4%** | **385** | **12,9%** | **341** |

2008թ-ի III եռամսյակում հանրապետությունում իրականացվել են 293 սեփականաշնորհման և մասնավորեցման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումներ, որոնց քանակը նախորդ եռամսյակի համեմատ աճել է` 5,4%-ով, իսկ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նվազել է` 2,0%-ով:

Սեփականաշնորհման և մասնավորեցման գործարքների քանակների փոփոխումներն ըստ Ստեփանակերտ քաղաքի և հանրապետության շրջանների 2007-2008թթ. III եռամսյակներում և 2008թ. II եռամսյակում ունեն հետևյալ բաշխվածությունը.

| | III եռամսյակ 2007թ. | փոփոխումը | III եռամսյակ 2008թ. | փոփոխումը | II եռամսյակ 2008թ. |
|---|---|---|---|---|---|
| Ստեփանակերտ | 206 | -34,0% | 136 | -15,5% | 161 |
| Ասկերան | 6 | 66,7% | 10 | 10,0 անգամ | 1 |
| Մարտունի | 5 | 0,0% | 5 | 2,5 աանգամ | 2 |
| Մարտակերտ | 10 | 20,0% | 12 | 4,0 աանգամ | 3 |
| Հադրութ | 7 | 3,4 անգամ | 24 | 8,0 անգամ | 3 |
| Շուշի | 46 | 73,9% | 80 | 2,6 անգամ | 31 |
| Քաշաթաղ | 19 | 36,8% | 26 | -66,2% | 77 |
| **Հանրապետությու** | **299** | **-2,0%** | **293** | **5,4%** | **278** |

## ԼՂՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԿԱԴԱՍՏՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

«Գնահատման և համակարգված դիտարկումների բաժին»
ՀԵՌ : 5-17- 49